ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ

ք. Երևան-0015, Մ. Խորենացի 3, 7

Շ/Մ/3-2/11230-12 22.10.2012թ.

"Հարկ վճարողների պաշտպանություն"
հասարակական կազմակերպության
նախագահ պարոն Փ. Թադևոսյանին

Հարգելի պարոն Թադևոսյան

Ի կատարումն ՀՀ վարչապետի թիվ 02/23.2/14324-12 հանձնարարականի՝ Ձեր կողմից ՀՀ վարչապետին հասցեագրված գրության վերաբերյալ՝ կապված ՀՀ մաքսային օրենսգրքով սահմանված մաքսային կանոնների խախտման համար պատասխանատվություն սահմանող դրույթների պարզաբանման հետ, հայտնում եմ հետևյալը.

"Իրավական ակտերի մասին" ՀՀ օրենքի 87-րդ հոդվածի համաձայն՝ իրավական ակտի վերաբերյալ պարզաբանումներ տրվում են վերը նշված հոդվածով սահմանված դեպքերում՝ նույն հոդվածով սահմանված կարգով դիմելու պայմաններում: Մասնավորապես՝ իրավական ակտի վերաբերյալ պարզաբանումներ տրվում են իրավական ակտի դրույթների ոչ հստակ կամ տարաբնույթ ընկալման, իրավական ակտն ավելի բարձր կամ նույն իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտին կամ նույն իրավական ակտի տարբեր դրույթների հակասության առկայության դեպքերում: Օրենքի պահանջներին չհամապատասխանող դիմումները, համաձայն նշված հոդվածի՝ դիտվում են որպես խորհրդատվական նպատակ հետապնդող:

Միաժամանակ ղեկավարվելով "Մաքսային ծառայության մասին" ՀՀ օրենքի 24-րդ հոդվածով սահմանված դրույթներով՝ գրությամբ բարձրացված հարցերի վերաբերյալ հայտնում եմ հետևյալը.

ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՀՀ մաքսային օրենսգրքի 203-րդ հոդվածով հստակ սահմանված է թե՛ խախտման էությունը, և թե՛ դրա համար նախատեսված պատասխանատվությունը: Հետևաբար հոդվածի պարզաբանման անհրաժեշտություն չկա:

Ինչ վերաբերում է ՀՀ Սահմանադրական դատարանի 2010 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ ՍԴՈ-920 որոշմանը, ապա հայտնում եմ, որ այն վերաբերում է կոնկրետ մասնավոր դեպքի և չի կարող ունենալ համապարտադիր նշանակություն:

Միաժամանակ հայտնում եմ, որ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի և ՀՀ ֆինանսների նախարարության կողմից մշակվել է "Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին" ՀՀ օրենքի նախագիծ, որում վերանայվել են նաև մաքսային կանոնների խախտումներին և դրանց համար նախատեսված պատասխանատվությանը վերաբերող հոդվածները, մասնավորապես՝ 199, 199[1], 202 և 203 հոդվածները:

Վ. Միրումյան

ՊԱՏՃԵՆ

Կատարող՝ Մաքսային ընթացակարգերի բաժին
Հեռ.՝ 060-544-329, 544-342